

Խմբ. — Մեր անկապտելի ժառանգու-	էջ 1
թիւնը	1

Հայկական Ֆեմարան-Բանասիրական

Հ. Ստեփան Ֆերաֆեան. — Հին բժշկա-	
բան կամ Բժշկարան Գագիկ-Հեթումեան-	
կարեւոր բառեր և անոնց մեկնութիւնը .	6
Մեսրոպ Յ. Սեբեանց. — Թէ ո՞ր և ե՞րբ	
մեռած հայր բարեյիշատակ Հ. Եղիա Թով-	
մանի	12
Հ. Ե. Փ. — 1600-եան քեզագիր մը գրա-	
նուած վէճերու մէջ	14
Յ. Քիւրտեան. — Մանրանկարիչ Գրի-	
գոր երէց վանեցի	18
Հ. Վ. Հաջոնի. — Հայերէնի հարցեր.	23
Յակոբ-Գրիգոր. — Անտեղի հարուած-	
ներ	34
Խմբ. — Մեր ընթերցողներուն (հայե-	
րէնի հարցերու մասին)	35
Հ. Եղիա Փէլիկեան. — «Յորելիական-	
ախոյեանական» (ստուգաբանութիւն).	38

Գրական

Վիկտորիա Աղանուր. — Խաղաղութիւն	
(Թրգմ. Հ. Ե. Փ.).	43
Ատա Նեկրի. — Մայրիկիս (Թրգմ. Հ.	
Ե. Փ.).	43
Արսէն Երկար. — * * *	43
Հրաչ Գալստեանց. — Մարդ կը փնտռեմ.	44
» » Մօրս	45
Հ. Մ. Ազգերեան. — Նուագ առ Մօնս.	
Մեծօֆանդէ (հր. Հ. Ղ. Տ.).	46
Ուիլիերմ Սարոյեան. — 70,000 Ասորի-	
ներ (Թրգմ. Հ. Քաջարեանց)	47

Օրուան գրքեր-Գրախօսական

Յ. Քիւրտեան. — Հին վաղարշապատի	
պեղումները (Ա. Քալանթար)	52
Յ. Քիւրտեան. — Նիւթեր Հայաստանի	
սոցիալական շարժումների պատմութեան	
համար (Ի. Զաւախիշվիլի. Թրգմ. Լ. Մ.).	53
Յ. Քիւրտեան. — Հաւուց թառի Ամե-	
նափրկիչը և նոյնանուն յուշարձաններ Հայ	
արուեստի մէջ (Գար. Արքեպօ. Յովսէփեան).	58
Հ. Եսայի Գոռզեան. — Բաֆֆի (հր.	
ծննդ. 100ամեակի Կ. Յանձնախումբ).	53

Շարք տես Գ. էջ

Réd. — Notre héritage inviolable .	1
------------------------------------	---

Académie Arménienne-Philologie

P. E. Ferahian — Ancien Traité de	
Médecine des rois Kakigh et Haitoun .	6
Mesrovb J. Seth — Date et lieu de	
naissance du père de P. E. Thovmadjan.	12
P. E. P. — «Θηρομαχὴ Ἀνδρομάχου», L'An-	
tidote d'Andromaque (spécialité de 1600).	14
H. Kurdian. — Le miniaturiste prê-	
tre Grégoire de Van	18
P. V. Hatsouni — Questions de la	
langue Arménienne.	23
Hagop-Krikor. — Des coups injustes	
(linguistiques).	34
Réd. — A nos lecteurs (questions de	
de la langue arménienne moderne) .	35
P. E. Paitchikian — Etude sur les	
formes des mots «Յորելիական-ախոյեա-	
նական»	38

Littérature

Vittoria Aganoor Pompilj. — Pace	
(trad. en Arm.)	43
Ada Negri. — A mia madre	43
Arsène Yergath. — * * *	43
H. Katcharentz. — Je cherche des	
hommes	44
H. Katcharentz. — A ma mère	45
P. J.-B. Aucher — Sonnet à Mezzo-	
fante	46
William Saroian. — 70,000 Assyriens	
(trad. par H. Katcharentz)	47

Recensions

H. Kurdian. — Les fouilles près Va-	
gharchabad (par A. Kalantar)	52
H. Kurdian. — Matériaux pour l'histo-	
ire des mouvements sociaux de l'Ar-	
ménie (par Djavakhievili), (trad. L. M.).	53
Kurdian H. — Le «Sauveur» du cou-	
vent «Havouts thar» et des monuments	
homonymes dans l'Art arménien (par	
Mgr. K. Hovsépian)	58
P. I. Krouzian — Raffi (par le Co-	
mité du Centenaire)	53

Voir la suite, page 3.

ԲԱՋՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ՄԱՐՏ ԹԻՒ 1-3

ՀԱՏ. Ղ.Ջ. ՈՒՅԵՆ-ՈՒՅԵՐԸ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ՄԵՐ ԱՆԿԱՊՏԵԼԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

ԲԱՐԲԱՐՈՍ ազգերու իշխող ու աշխարհակալ պետերը սուր և կողոպուտ կը կտակեն իրենց պայազատներուն. և այդ անարգ ու վատ ժառանգութիւնն է որ կ'անցնի սերունդէ սերունդ, ժողովուրդէ ժողովուրդ: Քաղաքակիրթ ազգերուն կը մնայ պատմութեան աւանդել սեւատառ ու սեւադրոշմ անոնց դատապարտութիւնը և յաւիտենական անարգութիւնը բոլոր դարերուն վճռով:

Մեր Հայերը սակայն աննման ու անեղծ ժառանգութիւն մը թողած են մեզի, կտակ մը որ աստուածային կնիքն ունի իր վրայ, ժառանգութիւն մը որ հարստու-թիւն ու ցեղային պարծանք է միանգամայն:

Մեր Բարոյականը և մեր Գիրը:

Մեր բարոյականը՝ որ լոյս է գազանօրէն մեզ խողխողող ցեղերու խաւար մո-լեգնութեան քով. մեր Գիրը՝ որ շինութիւն ու փառք գիտցած է վճռել ու արձանագրել՝ մեր երկիրն ու քաղաքակիրթութիւնը մոխրի վերածող հրոսակներուն կործանումին և անարգութեան հակառակ:

Մեր քաղաքակիրթութիւնը՝ կրկին անգամ նուիրական. իր հինաւուրց փառքե-րով նրբաքանդակ, քրիստոնէական սրբաբոյր օժումով վերասլաց:

Աւելի քան 17 դար է որ մեր Յեղը այդ մեծ ու բարդ, անհամեմատ գեղեցիկ ու վսեմ ժառանգութեան է փարած, յամօթ վայրագութեան այն ցեղերուն՝ որ մեզ տասանորդեցին, որ անկարող եղան օգտուելու Գողգոթայի հրդեհի բոցավառ լոյսէն որ երկու հազար տարի է կը կը ճառագայթէ տիեզերքին ու կ'եղբայրացնէ ցեղեր ու ազգեր, որ կեանք կու տայ զրին ու գեղարուեստին, որ կը պատրաստէ անթիւ բանականեր, դաս դաս լեցնելով անապատներու ամայութիւնը, լեռներու կողերն ու փապարները. նուիրուած հոգիներ վանքերու մէջ սրբակեաց ու գործօն, առաքելու-թեան ցուպով պանդուխտ հեռաւոր աշխարհներ Աւետարանի և քաղաքակիրթութեան

ԲԱԶՄԱՎԷՊ ՅՈՒՆՈՒԱՐ-ՄԱՐՏ 1938

լոյսերու ծաւալումով, ամէնքն ալ, ճգնասուն ու նահատակ՝ աղօթաւոր համօրէն մարդկութեան համար... որ չպակսի լոյսը մտքի, սէրը սրտի, որ դաշտերն աճին ցորենով, այգիները զինով, և մարդիկ եղբայրացած վշտին ու աշխատութեան մէջ, վարճեն յուսալից կեանքի ուղին և քաղաքակրթական նորանոր յաղթանակներ, վայելեն և օրհնեն տիեզերքի Արարիչը:

Լուսաւոր և կոյս հոգիներ, որ Հայրենիքի անմահութիւնը կը խորհին, ու կը ստեղծեն գիր, գրականութիւն, ծէս ու շարական, գիրք ու մատեան՝ ազգային բարոյականի և գիտութեան հարստութիւն, որ անխոց ու անխուրտակելի կը մնայ մեզի մահ նիւթով թշնամիներէն:

Մեր կողմէն կը մնայ փարում Հայ գրին, Հայ լեզուին, Հայ ծէսին:

Մեր կողմէն՝ պաշտամունք և նուիրում մեր Հայրերու վսեմ Բարոյականին, մեր Հայրերու մաքուր և անեղծ Հաւատքին:

Ոչ մէկ ազգի մէջ այնքան զգալի ու կենսունակ է այդ զոյգ նուիրականութեանց տարօրինակ միութիւնը՝ որքան մեր քով. և մեր քով անիկա հոգի է ու մարմին:

Եւ այդ գաղտնիքին գիտակ է անշուշտ ամէն հայ. չէ՞ որ Հայ ազգի դատն ու քրիստոնէական աստուածային հաւատքը միասին բոյն դրած և նոյն սիրով սիրուած Մեսրոպի սրտին վրայ, միասին ծնան ու յայտնուեցան իբրեւ մարդկային և աստուածային փրկական տարրեր և տուին Հայութեան լոյսի ու փառքի ոսկեղէն դար մը՝ որուն նմանը երբեք չէ արձանագրուած տիեզերական պատմութեան մէջ:

Չէ՞ որ մեր մանուկներու հեգած գրերն ու վանկերը հայ էին ու քրիստոնէայ միանգամայն, հայ գիր ու Աստուածաշունչ, Հայ գրեր հայ հայրենիքի անխորտակելի պարիսպներ՝ յաւերժական ճշմարտութեան ու գեղեցկին պատգամներով կանգուն:

Աստուածային շունչով առաջին անգամ կերպարուած ու կենդանի Հայ գրերն էին որով խորենացին մեր Հայկազանց պատմութիւնը կերտեցին՝ Հոմերական քերթութեան չափ վսեմ, որով մեր անմահ թարգմանիչները աշխարհի գրական փառքերու մատենադարանն ու շտեմարանը դարձուցին ամբողջ Հայաստանը:

Այդ գրերով հեգեցին Ղեւոնդեանք ու Վարդանանք իրենց հաւատքի նախատարները և այդ գրերու և Աստուածային Գրքին համար արիւն և կեանք ալ տուին օր մը. երէկ անոնք, այսօր մեր Ապրիլեան Նահատակները: Եւ ասոնց ու անոնց արիւնը անխորտակելի ամբարտակ է և անփոխարինելի գրական և երաշխիք Հայ Գրին անմահութեան, մեր Հաւատքին ամբողջութեան:

Հետեւաբար այդ կրկին նուիրականութեանց փարումը այնքան գիտակից և բուռն պէտք է ըլլայ մեր կողմէն, որքան մեր բեկորները նշաւակ են դժխեմ ճակատագրի մը՝ անտուն, անտիրական, օտար ու վատ ազդեցութեանց հոսանքին մէջ, ուր կ'եղծանի, կ'այլալի և ի սպառ կը կորսուի մեր Հայրերու աստուածատուր լեզուն, մեր Հայրերու ամբիժ հաւատքը:

Եւ այդ նուիրականութեանց փարումը այնքան հզօր, ապրուած ու պողպարեւ պէտք է ըլլայ, որքան որ դեռ թարմ է տիեզերական շուքով ու շոինդով մեր սօնախմբած 1500ամեակը թարգմանութեան այն Գրքին՝ որ մեր Լեզուն ու Հաւատքը կ'ամփոփէ, և այդ է որ էականօրէն կը մնայ անխախտ, լուսաւոր և հրաշափառ կոթող մեր գոյութեան և մեծութեան. գաղտնիք՝ զոր կ'անգիտանան մեր թշնամիները: Քննենք սակայն պահ մը աստիճանը մեր գնահատանքին և պաշտամունքին հանդէպ այդ Գրին ու լեզուն, հանդէպ մեր Հայրերու Հաւատքին:

Առանց երկար ու խորաքննի հետազոտութեան՝ զայն կարելի է տեսնել ու չափել «Հայ Եկեղեցւոյ բարեկարգութիւն» պատգամին մէջ որ Էջմիածնէն ելած ու բռնած է Հայ Ազգի մեծագոյն զանգուածին ուշադրութիւնն ու մտահոգութիւնը միանգամայն. և իսկապէս այդ պատգամը այնպիսի հարցեր կը շօշափէ՝ որոնք իրենց ուղղակի առարկայ ունին Հայ լեզուն՝ զոր մէջ ժամագիրը — Մաշտոց — ճաշոց են, Հայ դաստիարակը կամ աստուածաբանական ուսումը Հայ կղերին, եւն:

Սաղիմեան պաշտօնաթերթը իրաւամբ կը դիտէ թէ «Նուիրական — բայց չքաշուինք ըսելէ — նոյն ատեն ծանրակշիռ հարց է որ կը դրուի մեր առջեւ. հարկ է անոր մօտենալ երկկողմեցեալ և իմաստութեամբ միանգամայն», անշուշտ ոչ թէ քանդելու կամ աւերելու, այլ «յառաջ բերելու սուրբ ոգեւորութիւն մը և աշխատելու վերազարթումին, վերածաղկումին և վերականգնումին այն Հաստատութեան, որ մեր անմահ նախնիներէն մեզի հրիտակուած ամենէն մեծ և պատուական ժառանգութիւնն է» («Սիւն» Հոկտ. 1937, էջ 208-10):

Ահա այդ երկկողմ և իմաստուն դիրքը, մեր Հայրերու կտակած սրբազան ժառանգութեան հանդէպ ունեցած այդ սէրը, պաշտամունքը և զայն պահպանելու գովելի նախանձախնդրութիւնն է որ համարձակութիւն կու տայ մեզի, ըսել ու թելադրել քանի մը էական կէտեր յանուն մեր սուրբ և սիրելի այն Նախնեաց որոնց սէրն ու պաշտամունքն ունինք հաւասարապէս, յանուն այն աւանդին որ անխորտակ ամէն Հայու կը վերաբերի, և որուն վերածնունդ տուաւ Ուխտիս Հեղինակը՝ Լուսանորդին Միթիթար, նորոգող ու վերածնող մեր ոսկեղէն Գրին, և մեր ոսկեղէն Հաւատքին՝ որ խտացած է մեր Հայրերու մատենագրական գանձարանին մէջ:

«Վերածաղկումի և վերականգնումի» տեսակէտով անշուշտ Հայկական սրբազան լեզուն՝ գրաբարն է որ իր դատը պիտի հետապնդէ՝ ընդդէմ այն հեռաւոր ծրագրին որ կը ձգտի զինքը արտաքսել իր վերջին ապաւէնէն՝ Հայ ծէսէն:

Բայց միթէ այդ սպառնալիքը անո՞ր համար որ արդէն զրեթէ լքուած կամ անկենդան է անիկա հայ կրթարաններուն մէջ... և միակ ու վերջին ապաւէնը Հայ ծէսին ու հայ տաճարին մէջ է որ ունի — բաց ի քանի մը հայ վանքերէն...:

Կը խորհուի՞ թէ նման ձեռնարկ մը դատապարտութիւնն է մեր ցեղային ամէնէն հարազատ գանձին ու ժառանգութեան, գեղարուեստական ու քաղաքակրթական ամենէն մեծ պարծանքին, որ քրտինքն ու կեանքն արժած է մեր Հայրերուն, որով ծովացած գրականութիւն մը ունինք բնիկ ու եկամուտ: Կը խորհուի՞ թէ ատիկա դաւ մըն է յաղթանակին դէմ մեր Վերածնունդին՝ զոր երկնեց Միթիթար ու իրականացուցին Միթիթարեանները՝ դարաւոր ճիգերով, անլուր տառապանքով, ըսենք նաեւ հաւածանքով ու զոհողութեամբ՝ մերկացնելով ունիթոռական խայտառակութիւնները, վերստին հագցնելով ոսկեղէն դարու պերճ ու վսեմ պատմուածքը Աստուածաշունչին ու մեր եկեղեցական սրբազան գրքերուն: Այդ էր որ երէկ կը փառաբանէր Անթիլիասի «Հասկ»ը, այդ է որ ըսած էր Լոնտոնի «Հայ Եկեղեցի»ն. «Մինչեւ ցայսօր ամենէն հարազատ և անթերի հայկական Աստուածաշունչն Վենետիկէն գնելու է»:

Լեզուականէն անդին ծխական — արարողականը կայ, որմէ եթէ դարերու ծանրաբեռնութիւններ, անհարկի խճողումներ ու կրկնութիւններ յապաւելը չի՛ նշանակեր քանդել մեր Նախնեաց իմաստուն ու բարեպաշտօն կերտուածքը համապատասխան և զուգընթաց իր ընդհանուր գծերով կաթողիկէ եկեղեցւոյ կարգաւորութեան հետ, սակայն ցանցառ ու միայն պարբերական կատարումներ՝ որոնց կ'ակնարկուի, կը զրկեն եկեղեցականը իր կոչումէն՝ որ էապէս մարդն է աղօթքի, երկնքի և երկրի միջեւ պատգամաւորը, զոհարերն ու հաշտարարը:

Ո՞ր են մեր հնութեան ու միջին դարերու վանքերն ու անապատները՝ ուր կը ճգնէին երկնքի հանդէպ սրբաբոյր, աղօթաւոր հազար ու բիւր հոգիներ... և հայ ժողովուրդը անոնցմէ կը սպասէր երկնքի օրհնութիւնը, աշխարհի շինութիւնը, իր վշտերուն սփոփանքը: Անոնց թերին այսօր հակառակ ուղղութիւն պիտի թելադրէր:

1606-74



